ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 26-Լ

«04» 04 2023 թ. ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 27-Ի N 47 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության դատախազության բնականոն գործունեությունն ապահովելու և աշխատանքի հավասարաչափ ծանրաբեռնվածություն ու բաշխում կատարելու անհրաժեշտությունից ելնելով՝ Արմավիրի մարզի դատախազի տեղակալի 1 թափուր հաստիքը կրճատելու և նույն մարզի դատախազության դատախազի 1 հաստիք ավելացնելու, Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազի օգնականի 1 թափուր հաստիքը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության դատախազության ֆինասատնտեսական վարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի վարորդի 1 թափուր հաստիքը կրճատելու և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականի 2 հաստիք ավելացնելու նպատակով, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ և 7-րդ կետերով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

Հրամայում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2022 թվականի հունիսի 27-ի՝ «Հայաստանի Հանրապետության դատախազության հաստիքացուցակը սահմանելու և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2021 թվականի նոյեմբերի 22-ի N 91 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 47 հրամանի (այսուհետ՝ Հրաման) 1-ին հավելվածի 4-րդ բաժնի 26-րդ գլխում «Դատախազի տեղակալ 3» բառերը փոխարինել «Դատախազ տեղակալ 2», իսկ «Դատախազության դատախազ 7» բառերը՝ «Դատախազության դատախազ 8» բառերով.

2. Հրամանի 2-րդ հավելվածի 1-ին բաժնի 3.3-րդ գլխում «Վարորդ 19» բառերը փոխարինել «Վարորդ 18», «***Ընդամենը՝ Ֆինանսատնտեսական վարչությունում 43***» բառերը՝ «***Ընդամենը՝ Ֆինանսատնտեսական վարչությունում 42***», իսկ 24-րդ գլխի և 5-րդ բաժնի «***ԸՆԴԱՄԵՆԸ՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունում 133***» բառերը՝ «***ԸՆԴԱՄԵՆԸ՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունում 132***» բառերով.

3. Հրամանի 3-րդ հավելվածում «Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդական 5» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդական 7», «Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալի օգնական 5» բառերը՝ «Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալի օգնական 4», իսկ «***ԸՆԴԱՄԵՆԸ 13***» բառերը՝ «***ԸՆԴԱՄԵՆԸ 14***» բառերով:

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

5. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

6. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին, ավագ դատախազներին ու դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին ու ավագ դատախազներին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին:

Ա.ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ